ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/0097/02/25 ք. Երևան
14 Հունվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանս, ծանոթանալով «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ի՝ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի այգիների, պուրակների կառուցում բարեկարգում, վերանորոգում/» սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքների կատարման շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի լճի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման նպատակով 21.10.2024թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-24/123» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 7 արձանագրությամբ՝ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ» ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի

մասին:

Քաղաքացիական գործն էլեկտրոնային համակարգի միջոցով հասանելի է դարձել դատավորի աշխատակազմին 09.01.2025թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը: Միաժամանակ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ից պետք է պահանջել «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/123» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 7 արձանագրությամբ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ» ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ի՝ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի այգիների, պուրակների կառուցում բարեկարգում, վերանորոգում/» սուբվենցիոն ծրագրի շինարարական աշխատանքների կատարման շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի լճի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման նպատակով 21.10.2024թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/123» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 7 արձանագրությամբ՝ «ՔԱՆՔԱՐՇԻՆ» ՍՊԸ և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ» ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված

որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2.ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ի պահանջել դատարան ներկայացնել «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-24/123» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 7 արձանագրությամբ «ՔԱՆՔԱՐԾԻՆ» ՍՊԸ և «ԴՈՒՍՏՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ» ՍՊԸ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան ՀԿՀ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի փետրվարի 25-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2025.01.14 10:39:44 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am